## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 10.11.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-23/2 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<08>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տելեկոմ Արմենիա>> ԲԲԸ, ի դեմս տնօրեն Հ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 10.11.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-23/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Վճարումը կատարվելու է սահմանված կարգով ծառայությունն ընդունելուց հետո յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 15-ը :

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 10.11.2022թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ | <<Տելեկոմ Արմենիա>> ԲԲԸ |
| ք. Երևան, Արմենակյան 108/4 | ք. Երևան, Ազատության 24/1 |
| ՀՎՀՀ 01508793 | ՀՎՀՀ 02500052 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | h/h 163004038879 |
| Հ/Հ 1150001612200100 | <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ |
| Մ. Ադամյան | corp_tender@telecomarmenia.am |
| | 010-700-700 |
| | Լիազորված անձ՝ Վ. Կարապետյան |
| ------------------------------ | ------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |